

ՀԱԳՄՉ10.60

Առաջին հրատարակություն
1 հոկտեմբերի 2001թ.
Ներառում է փոփոխություններ 1, 2 և 3-ը

Անվտանգություն և աշխատանքի հիգիենա՝ ականազերծման միջադեպերի մասին զեկուցումը և դրանց հետաքննությունը

Տնօրեն,
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ),
2 United Nations Plaza, DC2-0650
New York, NY 10017
USA

Էլ. Փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498
Կայքէջ՝ www.mineactionstandards.org

Նախազգուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/> կամ ՄԱԿԱԾ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>):

Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱԾ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)
2 United Nations Plaza, DC2-0650
Նյու Յորք, NY 10017
ԱՄՆ

Էլ-փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498

Բովանդակություն

Բովանդակություն	iii
Նախաբան	v
Ներածություն	vi
1. Ծավալ.....	7
2. Փաստաթղթեր	7
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	7
4. Միջադեպերի վերաբերյալ զեկուցելու և դրանց հետաքննության վերաբերյալ պահանջներ 8	
4.1. Միջադեպեր	8
4.1.1. Ընդհանուր պահանջներ.....	8
4.1.2. Միջադեպերի մասին զեկույցներ ներկայացնել	9
4.1.2.1. Միջադեպերի մասին նախնական զեկույց.....	9
4.1.2.2. Միջադեպերի մասին մանրամասն զեկույց	9
4.1.3. Ձեկույցների ներկայացման կարգ.....	9
4.2. Պաշտոնական հետաքննություններ	10
4.2.1. Ընդհանուր պահանջներ.....	10
4.2.2. Հետաքննության անցկացման ընթացակարգերը.....	11
4.3. Ձեկույցների ներկայացում և տարածում	12
5. Պարտավորություններ	12
2.1. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ).....	12
2.2. Ականազերծող կազմակերպություններ	13
2.3. Ականազերծող կազմակերպության աշխատողներ.....	13
Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր.....	14
Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ.....	15
Հավելված Գ (Տեղեկատվական) Ականազերծման միջադեպի մասին զեկուցելու ընթացակարգի օրինակ	17
Հավելված Գ, Լրացում 1 (Տեղեկատվական) Ականազերծման միջադեպի նախնական զեկույցի օրինակ.....	19
Հավելված Գ, Լրացում 2 (Տեղեկատվական) Ականազերծման միջադեպի նախնական զեկույցի օրինակ.....	21
Հավելված Գ, Լրացում 3 (Տեղեկատվական) Մարմնական վնասվածքի հաշվետվական թերթիկի օրինակ (տես ծանոթագրություն)	27
Հավելված Դ (Տեղեկատվական) Ականազերծման միջադեպի հետաքննության ԳՍԸ օրինակ 29	
Հավելված Դ, Լրացում 1 (Տեղեկատվական) Պաշտոնական հետաքննության աստիճանը որոշելու մասին ուղեցույց.....	31
Հավելված Դ., Լրացում 2 (Տեղեկատվական) Պաշտոնական հետաքննության իրավասությունների շրջանակի օրինակ	33
Փոփոխությունների գրանցում	37

Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելառճերի և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

Ներածություն

Ականազերծման գործողություններ իրականացնելիս տեղի ունեցած միջադեպերի մասին հստակ սահմանված, սպառիչ կերպով և ժամանակին զեկուցելու և այդպիսի միջադեպերը հետաքննելու անհրաժեշտությունը հակաականային գործողությունների կառավարման կարևորագույն հարցերից է: Հետաքննության նպատակն է ականազերծման գործընթացի անվտանգությունը և որակը բարելավելու նկատառումներով հայտնաբերել առկա խնդիրները կամ հնարավորությունները:

Հակաականային գործողությունների ծրագրերի արդյունավետ կառավարումը և վերահսկումը կարող է նվազեցնել վնասի հավանականությունը, սակայն միշտ էլ կլինի ականազերծման ժամանակ միջադեպերի հավանականություն: Հակաականային գործողությունների բոլոր մակարդակների ղեկավար անձնակազմը բարոյաիրավական պատասխանատվություն կրում է վնասի հավանականությունն ամենացածր իրատեսական մակարդակի հավասարեցնելու համար: Ականազերծման միջադեպերի վերաբերյալ պատշաճ զեկուցումը և դրանց հանգամանալից հետաքննությունը կարող են կարևորագույն դեր խաղալ վերոնշյալ նպատակների իրականացման հարցում: Հավաքագրված և հասկանալի ու մատչելի ձևով ներկայացված տեղեկությունները կնպաստեն “ձեռք բերած փորձից դասեր քաղելուն” և կօգնեն ճիշտ արձագանքել արտակարգ իրավիճակներին, բարձրացնել ականազերծման գործընթացի որակը և կրճատել ականազերծման հետագա աշխատանքների ժամանակ հնարավոր վթարների հավանականությունը:

Սույն չափորոշիչի նպատակն է ներկայացնել մասնագրեր /տեխնիկական պայմաններ/ և ուղեցույց ականազերծման միջադեպերի զեկուցման և հետաքննության նվազագույն պահանջների վերաբերյալ: Փաստաթուղթը կազմված է երեք մասից՝ 1-ից 3 կետերը ներկայացնում են սույն չափորոշիչի կիրառման շրջանակը, նորմատիվային փաստաթղթերը և օգտագործման տերմինները, 4-րդ և 5-րդ կետերում սահմանված են պահանջները, մասնագրերը և պատասխանատվությունները, իսկ Հավելվածները լրացուցիչ տեղեկություններ են տալիս և կողմնորոշում չափորոշիչի կիրառման վերաբերյալ:

Անվտանգություն և աշխատանքի հիզդենա՝ ականազերծման միջադեպերի մասին զեկուցումը և դրանց հետաքննությունը

1. Ծավալ

Սույն ՀԱԳՄՉ-ում ներկայացված են ականազերծման միջադեպերի զեկուցման և հետաքննության նվազագույն պահանջների վերաբերյալ մասնագրեր և ուղեցույց՝ ականազերծման գործողությունների ազգային մարմնի (ԱԳԱՄ) և ականազերծող կազմակերպությունների համար: Այն տալիս է սահմանումներ ականազերծման միջադեպերի դասակարգման համար, որոնք կօգնեն հակաականային հանրության լայն շրջանակների համար օգտակար դասեր քաղել:

Սույն չափորոշիչը կիրառելի է միայն ականազերծման տեղանքում ծագած միջադեպերի մասին զեկուցելու և դրանք հետաքննելու նպատակներով: Այն չի վերաբերում աշխատանքային տեղամասից դուրս տեղի ունեցած միջադեպերին (տես ստորև ներկայացված տերմինները, սահմանումները և հապավումները): Չափորոշիչը չի վերաբերում նաև ազգային կամ ոստիկանության կարիքները բավարարելու նպատակով անցկացվող հետաքննություններին, թեև համապատասխան մարմինը կարող է որոշել ընդունել այս չափորոշիչի որոշ տարրեր:

2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ հղումները կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղենիշի դրույթների մի մասը:

3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

Հավելված Բ-ում բերված է սույն չափորոշիչում կիրառված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը: ՀԱԳՄՉ-ում կիրառված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ամբողջական ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղենիշների լեզվի հետ:

ա) «պետք է» կիրառվում է ցույց տալու այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն՝ չափորոշիչն ամբողջությամբ բավարարելու համար.

բ) «հարկավոր է» օգտագործվում է նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար.

գ) «կարող է» օգտագործվում է գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

“Վթար” տերմինը նշանակում է անցանկալի դեպք, որը հանգեցնում է վնասի:

“Միջադեպ” նշանակում է որևէ դեպք, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել վթարի:

“Ականազերծման ժամանակ տեղի ունեցած միջադեպ” նշանակում է միջադեպ ականազերծման տեղանքում, որտեղ կա ականների կամ պատերազմական գործողություններից մնացած պայթուցիկ զինամթերքի (ՊՊՄ) վտանգ (տես ականի միջադեպ):

“Ականների հետ կապված միջադեպ” նշանակում է միջադեպ ականազերծման աշխատանքային տեղամասից դուրս, որտեղ կա ականների կամ ՊՊՄ վտանգ (տես ականազերծման միջադեպ):

4. Միջադեպերի վերաբերյալ զեկուցելու և դրանց հետաքննության վերաբերյալ պահանջներ

4.1. Միջադեպեր

4.1.1. Ընդհանուր պահանջներ

Հետևյալ միջադեպերի մասին տեղեկությունները պետք է զեկուցվեն ԱԳԱՄ-ին՝

- ա. Վթար, որի ժամանակ ականը, պայթուցիկը կամ ՊՊՄ-ն մարմնական վնասվածք է հասցրել աշխատողին, այցելուին կամ համայնքի բնակիչներից որևէ մեկին ականազերծման աշխատանքային տեղամասում;
- բ. Միջադեպ, որի ժամանակ ականը, պայթուցիկը կամ ՊՊՄ-ն վնասել է սարքավորումը կամ գույքը ականազերծման աշխատանքային տեղամասում;
- գ. Ականի կամ ՊՊՄ հայտնաբերում տարածքում, որը նախկինում մաքրվել է ականներից, գրանցվել կամ նշագրվել է որպես ականազերծված՝ անկախ ականի կամ ՊՊՄ-ի վնաս հասցնելու հանգամանքից;
- դ. Երբ գործառնությունների ստանդարտ ընթացակարգերի (ԳՍԸ) կամ գրավոր չափորոշիչների կիրառման, ինչպես նաև աշխատողներին տրված սարքավորումների խափանման արդյունքում ականազերծման աշխատանքներին մասնակցող աշխատողները, այցելուները կամ տեղի բնակիչները ենթարկվում են անթույլատրելի վտանգի;
- ե. Ականազերծման աշխատանքային տեղամասում ականի, ՊՊՄ կամ պայթուցիկի որևէ չպլանավորված պայթեցման մասին, անկախ այդպիսի միջադեպի պատճառից կամ արդյունքից;
- զ. Ականազերծման աշխատանքային տեղամասում ականի, ՊՊՄ կամ պայթուցիկի հետ չկապված վթարի մասին, որի արդյունքում պահանջվում է տուժածների անհապաղ տեղափոխում մասնագիտացված բուժհաստատություն՝ բուժօգնություն ցուցաբերելու նպատակով: Այսպիսի վթարները կարող են վկայել ընթացակարգերի կամ սարքավորումների թերությունների մասին:

Սարքավորումների, չափորոշիչների կամ հաստատված ԳՍԸ-ների թերությունների կամ էլ վտանգի նոր տեսակի առկայության մասին վկայող միջադեպերի վերաբերյալ զեկույցներ ստացող մարմինները պետք է ընդհանուր նախագգուշական հայտարարություն ուղարկեն բոլոր ականազերծող կազմակերպություններին, որոնք կիրառում են նույն սարքավորումները, չափորոշիչները կամ հաստատված ԳՍԸ-ները կամ կարող են հանդիպել նման վտանգների: ԱԳԱՄ-ի բացակայության դեպքում ականազերծող կազմակերպությունները պետք է ստանձնեն այս պատասխանատվությունը:

Նշում. ԱԳԱՄ-ը կարող է անհրաժեշտ համարել ականների կամ ՊՊՄ-ի հետ կապված միջադեպի հանգամանակից հետաքննության անցկացումը՝ գնահատելու համար համայնքի վարքագծի վրա տվյալ ռիսկի ազդեցությունը: Սա կօգնի ավելի ճիշտ գնահատել ԱՎԻ ուղերձների կամ ծրագրերի նշանակությունը և արդիականությունը:

4.1.2. Միջադեպերի մասին զեկույցներ ներկայացնել

Ականազերծման ժամանակ տեղի ունեցած միջադեպերի մասին զեկույցները պետք է կազմվեն երկու ձևաչափով՝ նախնական զեկույց և մանրամասն զեկույց:

4.1.2.1. Միջադեպերի մասին նախնական զեկույց

Ականազերծման ժամանակ տեղի ունեցած միջադեպերի մասին նախնական զեկույցը բաղկացած է երկու մասից՝ անհետաձգելի զեկույցում առավել օպերատիվ միջոցներով, որպես կանոն ռադիոկապի կամ հեռախոսակապի միջոցով և միջադեպի վերաբերյալ լիարժեք գրավոր տեղեկատվություն՝ ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով: Միջադեպի մասին նախնական զեկույցը ներկայացնում է միջադեպի մասին հիմնական տվյալներ, որը թույլ կտա ԱԳԱՄ-ին արագ արձագանքել, իսկ անհրաժեշտության դեպքում չնախատեսված վտանգի կամ չափորոշիչների, ԳՄԸ-ների կիրառման կամ սարքավորումների շահագործման մասին ընդհանուր նախազգուշական հայտարարություն ուղարկել մյուս ականազերծող կազմակերպություններին:

4.1.2.2. Միջադեպերի մասին մանրամասն զեկույց

Ականազերծման ժամանակ տեղի ունեցած միջադեպերի մասին մանրամասն զեկույցը կազմվում է տվյալ ականազերծող կազմակերպության կողմից անցկացված ներքին հետաքննության արդյունքների հիման վրա: Ձեկույցը կազմվում է ներքին հետաքննությունների հարցերով զբաղվող պաշտոնյայի (ՆՀՊ) կողմից, որը սակայն չի կարող լինել միջադեպում անմիջապես ներգրավված անձ: Ձեկույցը կազմվում է տվյալ ականազերծող կազմակերպության կողմից՝ միջադեպից հետո հնարավորինս սեղմ ժամկետներում (սովորաբար 10 օրվա ընթացքում): Եթե միջադեպը կապված չէ ականազերծման գործողությունների հետ, ապա մանրամասն զեկույց ներկայացնելու անհրաժեշտությունը կախված կլինի կոնկրետ դեպքից և պետք է որոշվի ԱԳԱՄ-ի կողմից: Որոշ փոքր միջադեպերի դեպքում՝ ականազերծման միջադեպի մասին մանրամասն զեկույցը կարող է փոխարինվել միջադեպի մասին պաշտոնական հետաքննությամբ: Տես Հավելված Գ-ի Լրացում 1-ը:

4.1.3. Ձեկույցների ներկայացման կարգ

Ականազերծման ժամանակ տեղի ունեցած միջադեպի մասին զեկույցի ներկայացման կարգի օրինակը բերված է Հավելված Գ-ում: Ներկայացված են ականազերծման միջադեպի մասին նախնական զեկույցի (Հավելված Գ-ի Լրացում 1) և մանրամասն զեկույցի (Հավելված Գ-ի Լրացում 2) տիպային օրինակներ:

4.2. Պաշտոնական հետաքննություններ

4.2.1. Ընդհանուր պահանջներ

Ականազերծման ժամանակ տեղի ունեցած միջադեպի պաշտոնական հետաքննության նպատակն է բացահայտել ականազերծման գործողությունների անվտանգության և որակի վերաբերյալ խնդիրները կամ դրանց բարելավման հնարավորությունները: Դա ոչ քրեական հետաքննություն է, ոչ էլ ապահովագրական փոխհատուցման վճարման ներկա կամ հնարավոր հետագա հայցի գնահատմանն օգնելու նպատակով կատարվող հետաքննություն: Որպես այդպիսին, ականազերծող կազմակերպության բոլոր աշխատակիցները պետք է ներկայացնեն միջադեպի հանգամանքների վերաբերյալ ամբողջական և ճշգրիտ տեղեկություններ և հայտնեն հետագա նմանատիպ միջադեպերը կանխելու նպատակով գործող ընթացակարգերը բարելավելու վերաբերյալ իրենց տեսակետները:

Ստորև հարցերը պետք է ենթակա լինեն պաշտոնական հետաքննության, որը պետք է անցկացնի համապատասխան որակավորում ունեցող և փորձառու երրորդ կողմը՝

- ա. Ականազերծման միջադեպ, որը հանգեցրել է մարմնական վնասվածքի կամ մահվան;
- բ. Ականազերծման միջադեպ, որը հասցրել է գույքի վնաս;
- գ. Ականազերծման միջադեպ, որի հասցրած վնասը կարող է պատճառ դառնալ համայնքի բնակչի կողմից վնասի փոխհատուցման խոշոր գումարի հայց ներկայացնելու համար;
- դ. Ականազերծման միջադեպ, որի արդյունքում տեղի է ունեցել մեծ միջադեպ և հասցրել զգալի վնաս;
- ե. Ականազերծման միջադեպ, որի արդյունքում նախկինում ականազերծված, որպես մաքուր տարածք գրանցված կամ նշագրված տարածքում հայտաբերվել է ական կամ ՊՊՄ միավոր;
- զ. Ականազերծման միջադեպ, որի ժամանակ հաստատված չափորոշիչների կիրառման կամ սարքավորումների խափանման արդյունքում ականազերծման աշխատանքներին մասնակցող աշխատողները, այցելուները կամ տեղի բնակիչները ենթարկվում են անթույլատրելի վտանգի;
- է. Ականազերծման միջադեպ, կապված ականազերծման աշխատանքային տեղամասում ականի, ՊՊՄ կամ պայթուցիկի որևէ չալանավորված պայթեցման հետ;
- ը. Ականազերծման միջադեպ, որը կարող է գրավել զանգվածային լրատվամիջոցների ուշադրությունը կամ լուսաբանվել լրատվամիջոցների կողմից;
- թ. Եթե ԱԳԱՄ-ը անհրաժեշտ համարի, ականազերծման աշխատանքային տեղամասում ականի, ՊՊՄ կամ պայթուցիկի հետ չկապված վթար, որի արդյունքում պահանջվում է տուժածների անհապաղ տեղափոխում մասնագիտացված բուժհաստատություն՝ բուժօգնություն ցուցաբերելու նպատակով:

Նշում՝ Ականների կամ ՊՊՄ-ի հետ կապված միջադեպերը կարող են նույնպես ենթակա լինել պաշտոնական հետաքննության՝ վարքագծային փոփոխությունների վերլուծության համար օպերատիվ տեղեկություններ ձեռքբերելու կամ տեղի բնակիչների հետ միջադեպերի/վթարների ընտրանքային հետաքննության նպատակով: Այսպիսի հետաքննությունները հիմնականում անցկացվում են ազգային մակարդակով և համապատասխան որակավորում և փորձ ունեցող երրորդ կողմի ներգրավմամբ:

4.2.2. Հետաքննության անցկացման ընթացակարգեր

Ականագերծման ժամանակ տեղի ունեցած միջադեպի պաշտոնական հետաքննությունը կարող է անցկացվել հետևյալ երեք մակարդակներով՝ հետաքննության խորհուրդ (ՀԽ), անկախ հետաքննություն և ներքին հետաքննություն: Հավելված Դ-ի Լրացում 1-ում ներկայացված է պաշտոնական հետաքննության ձևի ընտրության վերաբերյալ կողմնորոշիչ տեղեկատվություն:

ՀԽ և անկախ հետաքննությունները նախաձեռնվում են ԱԳԱՄ-ի կողմից, որը սահմանում է Իրավասությունների Շրջանակը (ԻՇ) և նշանակում է աշխատողներ՝ հետաքննությունն անցկացնելու համար: Հավելված Դ-ի Լրացում 2-ում ներկայացված է ՀԽ-ի կամ անկախ հետաքննության ԻՇ-ի օրինակ:

Ներքին հետաքննություն անցկացվում է միայն ականագերծման ժամանակ տեղի ունեցած փոքր բնույթի պահատարների համար և սովորաբար այդպիսի հետաքննությունը միջադեպի մասին մանրամասն զեկույցի կազմումն է: Վերջինս կազմվում է ականագերծող կազմակերպության կողմից՝ հաշվետվու բոլոր միջադեպերի համար (տես կետ 4.1.1 վերևում)՝ անկախ ԱԳԱՄ-ի կողմից համապատասխան ցուցումներ ստանալու փաստից: Այն դեպքերում, երբ պահանջվում է ՀԽ կամ անկախ հետաքննություն, պաշտոնական հետաքննությունից առաջ պետք է կազմվի միջադեպի մասին մանրամասն զեկույց, որը կցվում է պաշտոնական հետաքննության մասին զեկույցի:

Եթե հանգամանքները պահանջեն, ԱԳԱՄ-ը կարող է ԻՇ սահմանի ականագերծող կազմակերպության համար, որը և կանցկացնի ներքին հետաքննությունը: Այս դեպքում նման ներքին հետաքննությունը կանցկացվի միջադեպի մասին մանրամասն զեկույց կազմելու փոխարեն:

Պաշտոնական հետաքննություն սկսող մարմինը պետք է ապահովի հետևյալը՝

- ա. Հետաքննությունը պետք է սկսվի հնարավորինս շուտ;
- բ. Պաշտոնական հետաքննության անցկացման համար նշանակված անձինք որևէ առնչություն չունեն միջադեպի հետ և ունեն անհրաժեշտ որակավորում, գիտելիքներ և փորձ հետաքննության ԻՇ-ի պահանջները բավարարելու համար;
- գ. ԻՇ մեկ օրինակը տրամադրվել է այն ականագերծող կազմակերպություններին, որոնք կարող են օգնել պաշտոնական հետաքննության ժամանակ, ինչպես նաև առաջարկություններ անել հետաքննվող ականագերծման գործընթացի բարելավման վերաբերյալ;
- դ. արժեքավոր տեղեկությունների կորուստը կանխելու նպատակով միջադեպի վայրը հնարավորինս եկար ժամանակ փակ է պահվել՝ մինչև ՀԽ-ի կամ հետաքննող պաշտոնյայի կողմից թույլատրվել է մուտք գործել տարածք;
- ե. միջադեպի տեղամասը անմիջապես լուսանկարվել է;

զ. Եթե չկան բացառիկ հանգամանքներ, ապա հետաքննության մասին զեկույցը ներկայացվում է ժամանակին, ամբողջական, հասկանալի, հակիրճ և ճշգրիտ ձևակերպված (այդ թվում եզրակացությունները և բարելավման նպատակով արվող առաջարկությունները):

Նշում՝ ՀԽ-ի կազմում պետք է լինեն հակաականային գործողությունների ծրագրի առնվազն երեք անհրաժեշտ որակավորում և փորձ ունեցող բարձրագույն կամ տեխնիկական գծով ղեկավար պաշտոնյաներ: Հիմնական անդամները պետք է լինեն ԱԳԱՄ/ԱԳԱԿ ներկայացուցիչներ, մեկ անդամ երրորդ կողմ հանդիսացող ականազերծող կազմակերպությունից (օրինակ ԱԳԱԿ-ից կամ ուսումնական կամ մոնիտորինգի կազմակերպությունից) և մեկ անդամ միջադեպում ներգրավված կազմակերպությունից, որը սակայն որևէ անմիջական կապ չունի միջադեպի հետ:

Նշում՝ Անկախ հետաքննությունը պետք է անցկացվի ԱԳԱՄ/ԱԳԱԿ կողմից նշանակված անհրաժեշտ որակավորում և փորձ ունեցող անկախ հետաքննիչի կողմից:

Նշում՝ Ներքին հետաքննությունը պետք է անցկացվի ականազերծող կազմակերպության անհրաժեշտ որակավորում և փորձ ունեցող մասնագետի կողմից, որը սակայն որևէ անմիջական կապ չունի միջադեպի հետ:

Ականազերծման միջադեպի հետաքննության ԳՍԸ-ի օրինակը ներկայացված է հավելված Դ-ում:

4.3. Զեկույցների ներկայացում և տարածում

Հետևյալ տեղեկությունները ենթակա են լայն տարածման՝

- ա. միջադեպի հանգամանքները և դրա արդյունքում հասցված վնասը.
- բ. հետաքննության ժամանակ հավաքած տեղեկությունների վերլուծությունը.
- գ. հետաքննության արդյունքները (եզրահանգումներ, առաջարկություններ):

ԱԳԱՄ-ը կամ վերջինիս անունից հանդես եկող կազմակերպությունը պետք է տեղեկություններ տարածեն ականազերծման միջադեպերի մասին: ԱԳԱՄ-ի բացակայության դեպքում, ականազերծող կազմակերպությունը պետք է տրամադրի այդ տեղեկությունները երկրում գործող մյուս ականազերծող կազմակերպություններին և մյուս ԱԳԱՄ-ներին՝ ՄԱԿ-ի ականազերծման ծառայության միջոցով: Նոր վտանգների հայտնաբերման դեպքում անհապաղ հարկավոր է այդ մասին տեղեկություններ տարածել:

5. Պարտավորություններ

2.1. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

ԱԳԱՄ-ը կամ վերջինիս անունից հանդես եկող կազմակերպությունը պետք է՝

- ա. Սահմանի և իրականացնի ականազերծման միջադեպերի մասին զեկույցելու և դրանց հետաքննության մասին ընթացակարգեր, որոնք պետք է հիմնված լինեն սույն չափորոշիչի և այլ համապատասխան չափորոշիչների և ազգային կանոնակարգերի վրա;
- բ. Նշանակի մասնագետներ՝ ականազերծման միջադեպերը սույն չափորոշիչի համաձայն հետաքննելու համար;

- գ. Տրամադրի բոլոր հետաքննությունների զեկույցների արդյունքները երկրում գործող բոլոր ակնազերծող կազմակերպություններին, և որ ամենակարևորն է՝ ՄԱԿ-ի ակնազերծման ծառայությանը, որն այնուհետև կարող է այդ տեղեկությունների ամփոփ տարբերակը ներկայացնել այլ ԱԳԱՄ-երին;
- դ. Ապահովի, որ բոլոր բժշկական քննությունների/ստուգումների, պաթոլոգ-անատոմիական հետազոտությունների վերաբերյալ տեղեկանքների և բռնի կամ անժամկետ մահվան դեպքերը քննող քննիչների կողմից կազմված տեղեկանքները տրամադրվել են գլխավոր ակնազերծող կազմակերպությանը:
- Նշում. Ամենայն հավանականությամբ, այս տեղեկությունները կտրամադրվեն հանրությանը միայն պաշտոնական հետաքննության ավարտից հետո: Եթե բժշկական քննությունների արդյունքները որևէ կերպ կասկածի տակ են դնում պաշտոնական հետաքննության արդյունքները, ԱԳԱՄ-ը պետք է վերսկսի հետաքննությունը՝ հաշվի առնելով նոր ապացույցները:

2.2. Ակնազերծող կազմակերպություններ

Ակնազերծող կազմակերպությունները պետք է՝

- ա. Ժամանակին զեկույցեն ԱԳԱՄ-ին ակնազերծման ժամանակ տեղի ունեցած և զեկույցման ենթակա բոլոր միջադեպերի մասին;
- բ. Անմիջապես լուսանկարեն ակնազերծման պահատարի վայրը և վերջինիս մուտքը փակեն մինչև այն չստուգվի և մուտք գործելու թույլտվություն չտրվի ՀԽ-ի կամ հետաքննող պաշտոնյայի կողմից;
- գ. Միջադեպը հետաքննող մասնագետներին ապահովել մուտք դեպի տարածք, իսկ անհրաժեշտության դեպքում նաև վարչական օգնություն;
- դ. Հետաքննությանը տրամադրեն աշխատանքային տեղամասի մասին բոլոր նախնական փաստաթղթերը, ԳՄԸ-երը, կադրերի ուսուցման վերաբերյալ փաստաթղթերը և ռադիոհաղորդակցությունների գրանցամատյանը;
- ե. Օգնեն ակնազերծման միջադեպը հետաքննելու համար նշանակված աշխատողներին;
- զ. ԱԳԱՄ-ի բացակայության դեպքում հետաքննության արդյունքները տրամադրեն երկրում գործող այլ ակնազերծող կազմակերպություններին և մյուս ԱԳԱՄ-երին՝ ՄԱԿ-ի ակնազերծման ծառայության միջոցով:

2.3. Ակնազերծող կազմակերպության աշխատողներ

Ակնազերծող կազմակերպության աշխատողները պետք է՝

- ա. Կիրառեն համապատասխան չափորոշիչները և ԳՄԸ-երը, որոնք նախատեսված են ակնազերծման միջադեպերը կանխարգելելու համար;
- բ. Զեկույցեն սարքավորումների շահագործման վերաբերյալ դասընթացների ժամանակ և ընթացակարգերում իրենց կողմից նկատած թերությունների մասին;
- գ. Զեկույցեն ակնազերծման այն միջադեպերի մասին, որոնք ենթակա են զեկույցման;
- դ. Օգնեն միջադեպերի հետաքննության ժամանակ:

Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրատարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Սակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան.

ա) ՀԱԳՄՉ 04.10 Ականազերծման գործողությունների տերմիններ, սահմանումներ և հապավումներ:

Պետք է օգտագործվի թվարկված փաստաթղթերի վերջին տարբերակը/հրատարակությունը: Այս չափորոշիչում կիրառված բոլոր փաստաթղթերի պատճենները պահպանվում են ՄԱԺՄԿ-ում (Մարդասիրական ականազերծման Ժնևի միջազգային կենտրոն): ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղղորդիչ սկզբունքների և փաստաթղթերի վերջին տարբերակների/թողարկումների գրանցամատյանը պահպանվում է ՄԱԺՄԿ կողմից և տեղակայված է ՀԱԳՄՉ կայքէջում (տես www.mineactionstandards.org): ԱԳԱՄ-ը, գործատուները և շահագրգիռ այլ մարմիններ ու կազմակերպություններ պետք է նախքան ականազերծման ծրագրեր սկսելը ձեռք բերեն դրանց պատճենները:

Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

Բ.1.

Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊԶ)

Պայթուցիկ զինամթերք, որը չի օգտագործվել զինված հակամարտության ժամանակ, թողնվել է հետևում կամ բեռնաթափվել հակամարտության մասնակիցներից մեկի կողմից և այլևս չի հսկվում այն թողած կամ բեռնաթափած մասնակցի կողմից: Լքված պայթուցիկ զինամթերքը կարող է նախապես լիցքավորված կամ հագեցված լինել պայթյաքուղով, հրապատիճով կամ որևէ այլ կերպ պատրաստված լինել մարտական օգտագործման համար կամ էլ ոչ: (ԿՈԶ արձանագրություն V):

Բ.2.

Վթար

Անցանկալի դեպք, որի արդյունքում վնաս է հասցվում:

Նշում՝ Տարբերվում է OHSAS 18001 սահմանումից, 1999թ

Բ.3.

Ականազերծող

Ականազերծման աշխատանքային տեղամասում աշխատողները:

Բ.4.

Ականազերծման վթար

Պատահար ականազերծման աշխատանքային տեղանքում, որտեղ կա ականների կամ ՊՊՄ վտանգ (տես ականի միջադեպ):

Բ.5.

Ականազերծման միջադեպ

Ականների կամ ՊՊՄ վտանգ պարունակող ականազերծման աշխատանքային տեղամասում տեղի ունեցած պատահար (տես ականի միջադեպ):

Բ.6.

Ականազերծման գործողություններում ներգրավված աշխատող

Ականազերծման տեղանքի բոլոր աշխատողները:

Բ.7.

Ականազերծման տեղանք

Որևէ աշխատանքային տեղանք, որտեղ իրականացվում են ականազերծման գործողություններ:

Նշում՝ Ներառում է տեղամասերը, որտեղ կատարվում է հետազոտում, ականազերծում և ՊԶՎ, այդ թվում ականազերծման գործողությունների ժամանակ հայտնաբերած և տեղահանված ականների և ՊՊՄ-ի ոչնչացման նպատակով կիրառվող վնասազերծման կենտրոնացված տեղամասերը:

Նշում՝ Ականազերծման տեղամասի առումով հետազոտումը ենթադրում է ընդհանուր հետազոտում, որի նպատակն է հայտնաբերել ականների և ՊՊՄ վտանգը և վտանգավոր տարածքները:

Բ.8.

Պատերազմի պայթուցիկ մնացորդներ (ՊՊՄ)

Չպայթեցված զինամթերք (ՉՁ) և Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊՁ): (ՍՈՁ արձանագրություն V):

Բ.9.

Միջադեպ

Դեպք, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել վթարի:

Բ.10.

Ականի վթար

Ականների կամ ՊՊՄ վտանգ պարունակող ականազերծման աշխատանքային տեղամասից հեռու տեղի ունեցած վթար (տես ականազերծման վթար):

Բ.11.

Ականի միջադեպ

Ականների կամ ՊՊՄ վտանգ պարունակող ականազերծման աշխատանքային տեղամասից հեռու տեղի ունեցած պատահար (տես ականազերծման միջադեպ):




















Բ.12.

Աշխատանքային տեղանք

Բոլոր վայրերը, որտեղ աշխատողները պետք է իրենց աշխատանքի բերումով գտնվեն կամ գնան և որոնք գտնվում են գործատուի ուղղակի կամ անուղղակի հսկողության տակ: [ILO R164]

Հավելված Գ
(Տեղեկատվական)
Ականազերծման միջադեպի մասին զեկուցելու ընթացակարգի օրինակ

Վերնագիր` Ականազերծման միջադեպի մասին զեկուցման կարգ	No: ՀԱԳՄՉ 10.60	Ամսաթիվ 01/10/04		
Նպատակը` Ականազերծման միջադեպի արդյունավետ և ճշգրիտ զեկուցում, հաղորդելով արտակարգ իրավիճակներին արձագանքելու և հետաքննություն սկսելու համար անհրաժեշտ տեղեկություններ:	Գործընթացից օգտվողը` Գործողության ղեկավար Գործընթացի պատասխանատուն` Գործառնական բաժնի պետ			
Գործընթացի նկարագրություն	Պատասխանատվություն			
	Տեղամասի ղեկավար	Ականազ. Կազմակ.	ԱԳԱՄ/Ա ԳԱԿ	Այլ մարմին
Ականազերծման միջադեպ Ականազերծող կազմակերպության արտակարգ իրավիճակներին արձագանքման ԳՍԸ և միջադեպի վայրի արգելափակման ԳՍԸ իրականացում:	○ ↓			
Տվյալների հավաքում և միջադեպի նախնական զեկույցի կազմում Տես սույն Հավելվածի Լրացում 1, որտեղ ներկայացված է նախնական զեկույցի մեջ ներառվող տեղեկությունների օրինակ:	□ ↓			
Միջադեպի նախնական զեկույցի ներկայացում (երկու մասերից) Տալ նախնական ծանուցում ռադիոկապի կամ հեռախոսակապի միջոցով` հաղորդելով հիմնական տեղեկություններ, այնուհետև ներկայացնել գրավոր զեկույց ֆաքսով կամ էլ. փոստով:	□ → □ → □			(պետ. ծանոթ. 1)
Արդյո՞ք միջադեպը պարունակում է անընդունելի ռիսկ ա. ինչպես օրինակ չնախատեսված վտանգ (ականների կամ ական-թակարդների տեղադրման համար կիրառված նոր սարքավորում կամ տեխնիկա) բ. չափորոշիչ կամ ԳՍԸ խախտում կամ աշխատողին տրված սարքավման խափանում:			◇ այո ոչ	
Ընդհանուր նախազգուշական ուղերձի հաղորդում. Տես Նշում 2 ստորև Ընդհանուր նախազգուշական ուղերձը պետք է ահագնագի չնախատեսված վտանգի մասին (ականների կամ ական-թակարդների տեղադրման համար կիրառված նոր սարքավորում կամ տեխնիկա) կամ չափորոշիչ կամ ԳՍԸ-ի կիրառում կամ սարքավորման շահագործում:	□ → □			
Արդյո՞ք անհրաժեշտ է արտաքին պաշտոնական հետաքննություն Տես Հավելված Գ-ի Լրացում 1` որոշում կայացնելու մասին: Տես Նշում 3 ստորև:	○		◇ ոչ	
Միջադեպի մանրամասն զեկույցի ներկայացում Կազմել և ներկայացնել մանրամասն զեկույց միջադեպի մասին: Տես սույն Հավելվածի Լրացում 2, որտեղ ներկայացված է մանրամասն զեկույցի օրինակ:	□ → ○			այո
Նշանակել հետաքննության խորհուրդ (ՀԽ) կամ արտաքին հետաքննող պաշտոնյա <input type="checkbox"/> Տես հավելված Գ-ի Լրացում 2, որտեղ ներկայացված է պաշտոնական հետաքննության իրավասությունների շրջանակի օրինակ:			□ ↓	

<p>Հետաքննել միջադեպը Ականազերծող կազմակերպությունը պետք է օգնի պաշտոնական հետաքննության անցկացմանը:</p>																
<p><u>Նշում 1.</u> Ներկայացնել ոստիկանությանը կամ որևէ այլ ազգային մարմնին, ինչպես պահանջվում է կամ հարմար է:</p> <p><u>Նշում 2.</u> Բոլոր ականազերծող կազմակերպություններին, որոնք կիրառում են նույն սարքավորումները չափորոշիչները կամ ԳՍԸ-ները կամ հավանական է, որ կենթարկվեն նույն վտանգին:</p> <p><u>Նշում 3.</u> Եթե ԱԳԱՄ/ԱԳԱԿ որոշի, որ հարկավոր է միայն ներքին պաշտոնական հետաքննություն, ապա միջադեպի մանրամասն զեկույցը կարող է փոխարինել այդպիսի հետաքննությունը:</p>	<table border="1"> <tr> <td data-bbox="869 291 997 403"> <p>Նշաններ փաստաթղթեր</p> </td> <td data-bbox="997 291 1117 403">  </td> <td data-bbox="1117 291 1236 403"> <p>(բազմակի)</p> </td> <td data-bbox="1236 291 1386 403">  </td> </tr> <tr> <td data-bbox="869 403 997 470"> <p>գործընթաց</p> </td> <td data-bbox="997 403 1117 470">  </td> <td data-bbox="1117 403 1236 470"> <p>որոշում</p> </td> <td data-bbox="1236 403 1386 470">  </td> </tr> <tr> <td data-bbox="869 470 997 560"> <p>բազմակի պատասխանատվություն</p> </td> <td data-bbox="997 470 1117 560">  </td> <td data-bbox="1117 470 1236 560"> <p>կապ</p> </td> <td data-bbox="1236 470 1386 560">  </td> </tr> </table>				<p>Նշաններ փաստաթղթեր</p>		<p>(բազմակի)</p>		<p>գործընթաց</p>		<p>որոշում</p>		<p>բազմակի պատասխանատվություն</p>		<p>կապ</p>	
<p>Նշաններ փաստաթղթեր</p>		<p>(բազմակի)</p>														
<p>գործընթաց</p>		<p>որոշում</p>														
<p>բազմակի պատասխանատվություն</p>		<p>կապ</p>														
<div style="border: 1px solid black; height: 140px;"></div>																

Հավելված Գ, Լրացում 1
(Տեղեկատվական)
Ականազերծման միջադեպի նախնական զեկույցի օրինակ

Ումից՝ **Ականազերծող կազմակերպության անվանումը** **Տես ծանոթ. 1**

Զեկույցի ներկայացման ամսաթիվը և ժամը **Տես Նշում 2**

ՈւՄՍ՝ ԱԳԱՄ/ԱԳԱԿ, ծրագրի անվանումը

Թեմա՝ **Ականազերծման միջադեպի նախնական զեկույց**

1. Կազմ. ենթամիավորը, տեղամասի գրասենյակ/նախագծի համարը, թիմի անունը/համարը
2. Վայրը (մարզ, շրջան, թաղամաս, գյուղ, հանձնարարականի համարը).
3. Միջադեպի ամսաթիվը և ժամը
4. Տուժածների մասին տվյալներ, այդ թվում՝
 - a) ԱԱՀ, անձի ինքնությունը հաստատող տվյալներ (անձի տարբերահամարը /US/). **Տես Նշումներ 3 և 4**
 - b) Մարմնական վնասվածքի նկարագրությունը **Տես Նշում 5**
 - c) Ցուցաբերած բուժօգնությունը
 - d) Տուժածի ներկայիս վիճակը
5. Տարհանման եղանակները, ուղիները, վերջնական վայրը և այնտեղ հասնելու ժամը
6. Վնասված սարքավորումների/շինությունների/ենթակառուցվածքների ցանկը **Տես Նշում 6**
7. Նկարագրեք, թե ինչպես է տեղի ունեցել միջադեպը **Տես Նշում 7**
8. Հիմնական աշխատողների կոնտակտային տվյալները **Տես Նշում 8**
9. Այլ տեղեկություններ **Տես Նշում 9**
 - a) Արդյոք միջադեպը տեղի է ունեցել վնասազերծված, անվտանգ թե ակնապատ տարածքում:
 - b) Սարքավորման տեսակը (եթե հայտնի է)
10. Այլ համապատասխան տեղեկություն **Տես Նշումներ 9 և 10**

Նշում 1՝ Սովերած տվյալները պետք է հաղորդվեն ռադիոկապով կամ հեռախոսով՝ հայտնի դառնալուն պես: Այնուհետև ականազերծման միջադեպի մասին մանրամասն /ամբողջական/ զեկույցը հնարավորինս շուտ ներկայացվում է ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով: (**Տես Նշում 10-ը ստորև**): Այնուհետև հարկավոր է ռադիոկապով կամ հեռախոսով հաստատել զեկույցն ուղարկելու փաստը: Զեկույցների ներկայացման ժամկետները պետք է սահմանվեն ԱԳԱՄ-ի կողմից և ներառվեն հակաակնային գործողությունների ազգային չափորոշիչներում:

- Նշում 2՝ Զեկույցների (նախնական և մանրամասն) ներկայացման օրը և ժամը:
- Նշում 3՝ ԱՏ տեղամասի յուրաքանչյուր աշխատողին տրված համարն է: ԱՏ օգտագործվում է, երբ հարմար չէ հայտնել տուժածների անունները ռադիոկապով:
- Նշում 4՝ Ականազերծման կազմակերպության աշխատողների դեպքում նշել ԱԱՀ (կամ ԱՏ) և պաշտոնը (ականազերծող, խմբի ղեկավար, հետազոտող/չափագրող և այլն): Որ ականազերծող կազմակերպության աշխատողների դեպքում նշել վնասված կողմի կամ կոնտակտային անձի տվյալները: Վերջինս հարկ չկա ուղարկել նախնական զեկույցի հետ, սակայն հարկավոր է նշել, որ մարմնական վնասվածք է ստացել ոչ ականազերծող կազմակերպության աշխատողը:
- Նշում 5՝ Յուրաքանչյուր տուժածի մարմնական վնասվածքները թվարկել առանձին՝ նշելով նրա ԱԱՀ կամ ԱՏ:
- Նշում 6՝ Թվարկել վնասված սարքավորումները, շինությունները կամ ենթակառուցվածքները, այդ թվում համառոտ նկարագրելով վնասի աստիճանը և, հնարավորության դեպքում, դրանց սեփականատիրոջ կոնտակտային տվյալները:
- Նշում 7՝ Հակիրճ նկարագրել թե ինչպես է պատահել դեպքը: Մաքրված տարածքում գտնվող ականի կամ ՊՊՄ-ի, չափորոշիչների կամ ԳՍԸ խախտման կամ սարքավորման խափանման դեպքում նշել, թե ինչպես է ականը/ՊՊՄ հայտնաբերվել կամ խախտումը/ խափանումը տեղի ունեցել:
- Նշում 8՝ Նշել ականազերծման միջադեպի դեպքում անհապաղ արձագանքման գործողությունները և հետաքննությունը համակարգելու համար պատասխանատուների կոնտակտային տվյալները, ինչպես օրինակ աշխատանքային տեղամասի տեսուչը և գործառնական բաժնի պետը: Համապատասխան դեպքերում նշել նրանց ռադիոազդականչերը կամ հեռախոսի համարները:
- Նշում 9՝ Հնարավորինս շատ տվյալներ նշեք միջադեպի հանգամանքների մասին, մասնավորապես այնպիսի տեղեկություններ, որոնք կօգնեն որոշում կայացնել հայտնաբերված նոր սարքավորման կամ սարքավորումների խափանման, չափորոշիչների կամ ԳՍԸ-ների թերությունների մասին ընդհանուր նախազգուշական ահազանգերի անհրաժեշտության մասին:
- Նշում 10՝ Միջադեպի մասին տվյալների հավաքման և վերլուծման արդյունքում չպետք է ուշացնել ականազերծման միջադեպի մասին ամբողջական զեկույցի ներկայացումը:

Հավելված Գ, Լրացում 2
(Տեղեկատվական)
Ականազերծման միջադեպի նախնական զեկույցի օրինակ

Ումից՝	Ականազերծող կազմակերպության անվանումը Տես Նշումներ 1, 2 և 3
Զեկույցի ներկայացման ամսաթիվը և ժամը	
ՈւՄ՝	ԱԳԱՄ/ԱԳԱԿ, ծրագրի անվանումը
Թեմա՝	Ականազերծման միջադեպի մանրամասն զեկույց
Հղումներ՝	
ա.	Ականազերծման միջադեպի նախնական զեկույց (օրինակը կցված է)
բ.	Ծրագրի հակաակնադիմաց գործողությունների ազգային չափորոշիչները
գ.	Ականազերծող կազմակերպության ԳՄԸ-ներ
Մաս 1. Ընդհանուր տեղեկություններ (սա նախնական զեկույցի մեջ առկա որոշ տեղեկությունների ամփոփումն է)	
1.	Ականազերծող կազմակերպության անվանումը
2.	Կազմակերպության ստորաբաժանումը, տեղամասի գրասենյակ/նախագծի համարը, թիվի անունը/համարը
3.	Աշխատանքային տեղամասի տեսուչի անունը
4.	Միջադեպի վայրը (մարզ, շրջան, գյուղ, հանձնարարականի համարը)
5.	Միջադեպի օրը և ժամը
6.	Միջադեպի տեսակը (տես կետ 4.1.1)
Մաս 2. Միջադեպի վերաբերյալ տվյալներ	
7. Տվեք պահատարի ընդհանուր նկարագրությունը, այդ թվում վայրը, ժամկետները, ականազերծող կազմակերպության աշխատողները (ականազերծող թիմեր, վարժեցրած շների թիմեր, մեխանիկական միջոցներով ականազերծող խմբեր) և տարածքում գտնվող ոչ ականազերծող կազմակերպության աշխատողները; տարածքում գտնվող ականներ, ՊՊՄ կամ պայթուցիկներ, ինչպես նաև օգտագործված փոխադրամիջոցները/սարքավորումները: Զեկույցիը հավելվածների տեսքով կցեք լուսանկարներ, գծապատկերներ և միջադեպի վայրի հատակագիծը (տարածքի հատակագիծը և աշխատանքային տեղամասի հատակագիծը), որը կօգնի լուսաբանել միջադեպի հետ կապված հանգամանքները: Տես նշումներ 4, 5 և 6:	
Մաս 3. Միջադեպի վայրում առկա պայմանները	
8. Նկարագրեք միջադեպի վայրում առկա պայմանները միջադեպը տեղի ունենալու պահին, այդ թվում տեղամասի դիրքը, նշագրումները, գրունտը և ռելիեֆը, բուսականությունը և եղանակային պայմանները:	
ա)	<u>Տեղամասի դիրքը և նշագրումը.</u> Նկարագրեք տեղամասի դիրքը, այդ թվում միջադեպի վայրը և դրա հսկողական տարածքը, տեղամասի նշագրման

ընդհանուր և հատուկ տեսակները: Նշեք չափերը, իսկ հնարավորության դեպքում նաև խաչաձև հղումներ կատարեք ԳՄԸ-երին: Հաշվի առեք այնպիսի հանգամանքներ, ինչպես օրինակ արևի և եղանակային պայմանների ազդեցությունը տեղամասի դիրքի վրա: Տեղամասի դիրքի մասին մանրամասները ներառեք միջադեպի սխեմաներում, որոնք կցված են զեկույցին որպես հավելված:

բ) Գրունտը և ռելիեֆը՝ Նկարագրեք գրունտը, նշելով հողի տեսակը, խտությունը կամ կոշտությունը և խոնավությունը: Նկարագրեք ռելիեֆը, նշելով արդյոք լանդշաֆտը հարթ է, անհարթ կամ բլրաշատ: Անհրաժեշտության դեպքում կիրառեք թեքության աստիճաններ (օրինակ 1-ը 25-ին)՝ առավելագույն/նվազագույն թերությունները ցույց տալու համար:

գ) Քուսականություն՝ Նկարագրեք բուսականությունը՝ տեսակը, չափերը և արմատային կառուցվածքը: Նշեք չափերը, ինչպես օրինակ խոտի/մշակաբույսերի/թփերի բարձրությունը և ծառերի բների առավելագույն չափը: Նշեք, արդյոք արմատային համակարգը որևէ կերպ ազդում է աշխատանքների վրա կամ արդյոք բուսականությունն այրվել/խանձվել է կամ որևէ այլ կերպ մաքրվել:

դ) Եղանակային պայմաններ՝ Նկարագրեք եղանակը միջադեպը տեղի ունենալու պահին:

9. Կցեք տեղանքի լուսանկարներ՝ ցույց տալու համար միջադեպի վայրում առկա պայմանները:

Մաս 4. Թիմի և հանձնարարականի մասին տեղեկություններ

10. Թիմի մասին տվյալներ. Մանրամասն նկարագրեք թիմի մեծությունը և կազմը (ակննազերծման մասնագետներ, ստորաբաժանումների ղեկավարներ, թիմի ղեկավարներ, տեսուչներ, բուժանձնակազմ և այլն), այդ թվում վարժեցրած շներով որոնողական թիմեր կամ մեխանիկական միջոցներով աշխատող թիմեր; որակավորումներ (բազային մասնագիտական որակավորում և որակավորման բարձրացման դասընթացներ) և ունեցած փորձը (իրականացված աշխատանքները, վայրերը, աշխատանքային տեղամասի պայմանները և վնասազերծած ականները և ՊՊՄ); որակավորման բարձրացման վերջին դասընթացը և թեմաները; վերջին արձակուրդը/հանգստյան օրը; թիմի վերջին մոնիտորինգի (թե ներքին և թե արտաքին) արդյունքները; թիմի հետ կապված հայտնի խնդիրները: Գնահատեք ընդհանուր թիմը և վրթարի հետ կապ ունեցող առանձին մարդկանց:

11. Հանձնարարականի մասին տվյալներ. Մանրամասն նկարագրեք ակննազերծման հանձնարարականը, այդ թվում հանձնարարականի կատարման համար իրականացված հետազոտությունները (ընդհանուր և տեխնիկական); տեղամասի վնասազերծման/մաքրման պլանը, այդ թվում մաքրման ենթակա տարածքը և մաքրման խորությունը; մաքրման ընթացքում հայտաբերվելիք ականների և ՊՊՄ ենթադրվող տեսակները և թիվը (եթե հայտնի է); ակննապատման հայտնի եղանակները կամ սխեմաները; մաքրումից հետո հողի նախատեսվող նպատակային օգտագործումը; հանձնարարականի կատարման վրա ծախսված ժամանակը; մաքրման ընթացքը՝ մաքրման ենթակա ընդհանուր տարածքի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ; հայտնաբերված զինամթերքի միավորների տեսակները և քանակությունը; հանձնարարականի կատարման հետ կապված խնդիրները:

12. Կցեք դասընթացների մասին փաստաթղթերի, մոնիտորինգի հաշվետվությունների, հետազոտման զեկույցների, վնասազերծման/մաքրման պլանների, հանձնարարականի կատարման ընթացքի զեկույցների օրինակներ կամ ակննազերծող

կազմակերպության/տեղամասի այլ վարչարարական փաստաթղթեր, որոնք պահանջվում են որպես հավելված:

Մաս 5. Օգտագործված սարքավորումները և կիրառված ընթացակարգերը

13. Օգտագործված սարքավորումները. Մանրամասն նկարագրեք միջադեպի վայրում օգտագործված սարքավորումները, որոնք կապված են միջադեպի հետ: Դրանց թվում են ականների հայտնաբերման համար կիրառվող սենսորները, անձնական պաշտպանության սարքավորումները (ԱՊՍ), ականագերծման մասնագետի գործիքների հավաքածուն, պայթեցման համար օգտագործվող սարքավորումները, կապի միջոցները, բժշկական սարքավորումները, տրանսպորտային միջոցները և մեխանիկական սարքերը: Էլեկտրոնային սենսորների համար նշեք տեղում փորձարկման պահանջները: Կարելի է հղում կատարել ԳՍԸ-ներին:

14. Կիրառված ընթացակարգերը. Նկարագրեք կիրառված այն ընթացակարգերը, որոնք կապված են միջադեպի հետ: Կարելի է հղում կատարել ԳՍԸ-ներին:

15. Աշխատանքային ռեժիմ. Նկարագրեք միջադեպը տեղի ունենալուց հետո կատարվող գործողությունների աշխատանքային ռեժիմը և նախօրեին աշխատողների կողմից աշխատած ժամերի քանակը (այդ թվում միջադեպի հետ կապված աշխատողներին): Եթե աշխատանքային ռեժիմով նախատեսվում է որոշակի աշխատանքների /գործառնությունների հանձնումը մեկ աշխատողից մյուսին, նկարագրեք երբ է եղել վերջին հանձնումը նախքան միջադեպը և հանձնման պահին կատարված գործողությունները, ինչպես օրինակ ականագերծման սարքավորումների ստուգումը, հրահանգավորումը և այլն: Կարելի է հղում կատարել համապատասխան ԳՍԸ-ին:

Մաս 6. Միջադեպի հետ կապված պայթյունավտանգ առարկաներ

16. Նշեք միջադեպի հետ կապված բոլոր ականները, ՊՊՄ կամ պայթուցիկները.

- ա) Հայտնաբերված պայթյունավտանգ միավորների համար (ականներ կամ ՊՊՄ) կամ այն պայթուցիկների, որոնց օգտագործման փաստը հայտնի է եղել, նշեք հետևյալ տվյալները՝ (1) ականներ/ՊՊՄ/ԼՊՁ – ընդունված անվանումները; (2) պայթուցիկ միջոցներ – բաղադրիչների մանրամասն նկարագրությունը (անվանում, տեսակ, չափեր կամ քաշ) և կառուցվածքային առանձնահատկությունները; (3) հայտնի պայթուցիկների համար - անվանումը, տեսակը, չափերը կամ քաշը: Հայտնաբերված միավորների համար հարկավոր է նշել նաև դիրքը/հողի վրա կամ տակ (այսինքն մակերեսին թե թաղված, վերջինիս դեպքում որքան խորը և ինչ եղանակով է տեղադրվել) և արդյոք այն ակտիվացվում է լարը քաշելու, հեռակառավարման կամ ական-թակարդի ձևով;
- բ) Պայթյունավտանգ առարկաների պայթեցման հետ կապված միջադեպերի համար նշեք նաև պայթյունի արդյունքում առաջացած փոսերի (չափերը և խորությունը); ականների/ՉՊՁ/ԼՊՄ կամ այլ բեկորների, ինչպես նաև միջադեպի հետ կապված հայտնի կամ կասկածվող առարկաների մասին տվյալներ: Հիշեք, թե ինչու է տվյալ առարկան կամ հայտնի կամ միայն կասկածվող:

17. Զեկույցիը հավելվածի տեսքով կցեք հայտնաբերված առարկաների լուսանկարները և տեխնիկական տվյալները կամ պայթյունի արդյունքում գոյացած փոսերի և բեկորների լուսանկարները:

Մաս 7. Մարմնական վնասվածքների մասին տվյալներ

18. Նշեք տվյալներ միջադեպի արդյունքում մարմնական վնասվածք ստացած աշխատողների մասին, այդ թվում նրանց, ովքեր ակնազերծման գործողություններում ներգրավված չեն: Նշեք նրանց անունը, ազգանունը, պաշտոնը, վնասվածքի մասին տվյալները, հղումներ կատարեք այն գործողություններին, որոնք միջադեպի պահին կատարում էր տվյալ անձը: Նշեք մարմնական վնասվածք ստացած բոլոր անձանց անունները՝ անկախ վնասվածքի փոքր կամ մեծ լինելուց: Հավելվածի տեսքով զեկույցին կցեք նաև բժշկական քարտերը և վնասվածքի մասին հաշվետվական թերթիկները: Վերջինիս նմուշը ներկայացված է սույն Հավելվածի Լրացում 3-ում: Միջադեպի հատակագծի վրա նշեք մարմնական վնասվածք ստացած անձի գտնվելու վայրը միջադեպը տեղի ունենալուց անմիջապես հետո:

Մաս 8. Վնասված սարքավորումներ/գույք/ենթակառուցվածքներ

19. Մանրամասն տվյալներ հաղորդեք միջադեպի հետ կապ ունեցող բոլոր սարքավորումների, գույքի միավորների կամ ենթակառուցվածքների մասին:

ա) Սարքավորումների դեպքում մանրամասն տվյալներ նշեք՝ սեփականատիրոջ անունը, արտադրողի անվանումը, մոդելը, տարիքը, սերիան և համարը (եթե կա), այդ պահի դրությամբ արժեքը (եթե հայտնի է), վնասվածքի մանրամասները, սեփականատիրոջ/կազմակերպության կողմից արված ապահովագրությունը և հնարավորության դեպքում նորոգման/փոխարինման ծախսերը: (Տես կետ 20-ը ստորև՝ միջադեպի հետ կապված ԱՊՍ պահանջների վերաբերյալ);

բ) գույքի և ենթակառուցվածքի դեպքում նշեք տվյալներ սեփականատերերի, վնասվածքի, սեփականատերերի կողմից արված ապահովագրության և եթե հայտնի է, վերականգնման կամ նորոգման համար պահանջվող ծախսերի մասին:

20. ԱՊՍ. Մանրամասն տվյալներ հաղորդեք միջադեպի հետ կապված բոլոր ԱՊՍ-երի մասին, այդ թվում տեսակը/գործառույթը, արտադրողը, մոդելը կամ այլ տարբերակիչ տվյալներ: Նկարագրեք վնասվածքը և նշեք մեկնաբանություններ այն մասին, թե որքանով է տվյալ ԱՊՍ արդյունավետ միջադեպում ներգրավված մարդկանց ստացած մարմնական վնասվածքը (կամ ավելի լուրջ վնասվածք) կանխելու առումով:

21. Զեկույցին հավելվածի տեսքով կցեք վնասված սարքավորումների, գույքի կամ ենթակառուցվածքների լուսանկարները և այլ ապացույցների օրինակները (սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր, գույքի գործարքների մասին փաստաթղթեր, ապահովագրության մասին փաստաթղթեր, վերանորոգման սակագներ/գնացուցակ և այլն):

Մասն 9. Շտապ բուժօգնություն և արտակարգ իրավիճակներում ցուցաբերվող օժանդակություն

22. Մանրամասն նկարագրեք նախքան տվյալ միջադեպը աշխատանքային տեղամասում առկա շտապ բուժօգնության և արտակարգ իրավիճակներում ցուցաբերվող օժանդակության (կապ և տուժածների տարհանման փոխադրամիջոց) առկայության մասին: Կարելի է հղում կատարել ԳՍԸ-երին: Եթե հնարավոր է տվյալ միջադեպի պարագայում, ապա նշեք թե ինչ հաճախականությամբ են ակնազերծման վթարի արձագանքման ուսումնավարժանքներ անցկացվում և երբ է եղել վերջին ուսումնավարժանքը:

23. Նշեք տուժածների տարհանման ժամանակ իրականացված հիմնական միջոցառումների ժամերը, ինչպես օրինակ տուժածների տարհանումը միջադեպի տարածքից, նախնական բուժհաստատություն ժամանումը, այնտեղից մեկնումը և վերջնական բուժհաստատություն ժամանումը:

24. Ներկայացրեք մեկնաբանություններ բժշկական շտապ օգնության և արտակարգ իրավիճակների տեխնիկական արձագանքման/օժանդակության վերաբերյալ՝ մասնավորապես տուժածների տարհանման պլանավորումը, նախապատրաստումը, բուժսարքավորումները և պարագաները, կապի միջոցները, տարհանման տրանսպորտային միջոցները, բուժհաստատությունները և արտաքին օժանդակությունը (ականագերծող այլ կազմակերպություններից): Թերությունների դեպքում հաղորդեք մանրամասն տվյալներ և առաջարկություններ՝ իրավիճակը բարելավելու վերաբերյալ:

Մաս 10. Ջեկույցների ներկայացման/գեկույցման ընթացակարգերը

25. Մեկնաբանություններ ներկայացրեք այն մասին, թե որքանով են արդյունավետ միջադեպի մասին նախնական գեկույցների ներկայացման ընթացակարգերը:

Մաս 11. Այլ հարակից հարցեր. Տես Նշում 7

26. Ներառեք այլ հարցեր, որոնք կապված են տվյալ միջադեպի հետ և ներկայացված չեն այս օրինակում:

Մաս 12. Քննարկումներ, եզրակացություններ և առաջարկություններ

27. Ներկայացրեք միջադեպի հետ կապված քննարկումները, եզրակացությունները և առաջարկությունները:

Հետաքննող պաշտոնյայի ստորագրությունը
Հետաքննող պաշտոնյայի անունը, ազգանունը

Հավելվածներ՝

- ա. Միջադեպի մասին նախնական գեկույցի օրինակ
- բ. Վկաների ցուցմունքներ
- գ. Միջադեպի վայրը և տեղանքի մանրամասն հատակագիծը/քարտեզը
- դ. Վայրի լուսանկարները
- ե. Անցկացված դասընթացների մասին փաստաթղթեր, մոնիտորինգի հաշվետվություններ, հետազոտման գեկույցներ, վնասագերծման /մաքրման պլաններ, հանձնարարականի կատարման ընթացքի գեկույցներ կամ ականագերծող կազմակերպության/տեղամասի այլ վարչարարական փաստաթղթեր
- զ. Հայտնաբերված առարկաների լուսանկարները և տեխնիկական տվյալները, պայթյունի արդյունքում գոյացած փոսերի և ականների/ՉՁ, ԼՊՁ բեկորների լուսանկարները:
- է. Բժշկական քարտեր և մարմնական վնասվածքների հաշվետվական թերթիկ
- ը. Վնասված սարքավորումների/գույքի կամ ենթակառուցվածքների լուսանկարներ
- թ. Սարքավորումների/գույքի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր (սեփականության վկայականներ, գույքի հետ գործարքի փաստաթղթեր, ապահովագրության փաստաթղթեր և այլն):

ժ.	Վնասվածքի վերանորոգման սակագներ/նախահաշիվներ
ժա.	ԱԳՏԿՀ պահանջների համապատասխան ականագերծման վթարների մասին և տուժածների մասին զեկույցներ: Տես Նշում 8

- Նշում 1՝ Ականագերծման միջադեպի մասին մանրամասն զեկույցը պետք է միջադեպից հետո հնարավորինս շուտ ներկայացվի: Այն պետք է կազմվի ականագերծող կազմակերպության համապատասխան որակավորում ունեցող և փորձառու հետաքննող պաշտոնյայի (ՀՊ), կողմից սակայն դա չպետք է լինի միջադեպի հետ անմիջական կապ ունեցող անձ:
- Նշում 2՝ Որոշ իրավիճակներում ականագերծման միջադեպի մանրամասն զեկույցին կարող է փոխարինել պաշտոնական հետաքննությունը: Տես Հավելված Դ-ի Լրացում 1-ը:
- Նշում 3՝ ԱԳԱՄ-ը պետք է սահմանի ժամկետները, որի ընթացքում ականագերծող կազմակերպությունները պետք է կազմեն և ներկայացնեն միջադեպի մասին մանրամասն զեկույցներ, այնտեղ ներառելով հակաականային գործողությունների ազգային չափորոշիչներում սահմանված տվյալները:
- Նշում 4՝ Վթարների/դժբախտ միջադեպերի դեպքում (տես կետ 4.1.1 “ա” և “գ”) նկարագրեք վթարը տեղի ունենալու պահին անցկացվող գործողությունները:
- Նշում 5՝ Մաքրված տարածքում (տես կետ 4.1.1 “գ”) հայտնաբերված ականների/ՉՁ/ԼՊՁ դեպքում նշեք թե ինչպես են դրանք հայտնաբերվել, դրանց տեսակը, հայտնաբերման կոնկրետ տեղը (ՏՄՀ-ով կամ հետադարձ հատման միջոցով, եթե դա հնարավոր է անվտանգ կերպով անել), ականների/ՉՁ/ԼՊՁ հայտնաբերման տարածքի դասակարգումը, ինչպես նաև այդ տարածքում իրականացված նախկին ականագերծման (տեխնիկական հետազոտման կամ մաքրման) գործողությունների վերաբերյալ այլ հայտնի տվյալներ:
- Նշում 6՝ Չափորոշիչների կամ ԳՄԸ-ի խախտման կամ սարքավորումների խափանման դեպքերում (տես կետ 4.1.1 “դ”) մանրամասն տվյալներ հաղորդեք միջադեպի ժամանակ կիրառվող ընթացակարգերի կամ շահագործվող սարքավորումների մասին, ինչպես է խախտումը/խափանումը հայտնաբերվել և հնարավոր հետևանքները, եթե դեռևս չեն վերացվել:
- Նշում 7՝ Այս օրինակի մեջ բերված ոչ բոլոր մասերն են կիրառելի զեկույցի ենթակա բոլոր միջադեպերի համար:
- Նշում 8՝ Անհրաժեշտության դեպքում ականագերծման միջադեպերի մասին ամփոփ զեկույցներ ներկայացնելու նպատակով կարող են օգտագործվել ԱԳՏԿՀ հաշվետվական ձևերը, սակայն վերջինս չի կարող փոխարինել ականագերծման միջադեպի մասին մանրամասն զեկույցին:

Հավելված Գ, Լրացում 3 (Տեղեկատվական)

Մարմնական վնասվածքի հաշվետվական թերթիկի օրինակ (տես Նշում 1)

Ականազերծող կազմակերպության անվանումը՝



Գտնվելու վայրը (մարզ, շրջան, գյուղ, հանձնարարական թիվ)՝

Տուժածի անունը, ազգանունը կամ ԱՏ՝

Կազմակերպության ստորաբաժանումը, տեղական գրասենյակը/նախագծի համարը, թիմի անվանումը/համարը՝

Միջադեպի օրը և ժամը՝

Սեռը, տարիքը՝ Վնասվածքի ստացման պատճառը՝ տես Նշում 2



Նշան	
Կոդ	Նշանակություն
A	Սալջարդ
AM	Ամպուտացիա
TAM	Տրավմատիկ ամպուտ.
B	Այրվածք/գունափոխում
D	հոդախախտ
F	կոտրվածք
FR	բեկոր
H	արյունահոսություն
IH	ներքին արյունահոս.
L	պատռվածքներ
LO	գործառույթի կորուստ









Աջ ոտնաթափ

Ձախ ոտնաթափ
/մատներ

- Նշում 1՝ **Թերթիկը լրացնելու հրահանգներ.** Յուրաքանչյուր վանդակում նշեք 'X' ցույց տալով մարմնի այն մասը, որտեղ չկա տեսանելի վնասվածք: Վնասված ստացած մասերի համար նշեք Նշաններ աղյուսակում ներկայացված կոդերից համապատասխանը. Հնարավոր է, ո չկարողանաք նշել բոլոր վնասվածքներն առանց մասնագիտական բժշկական խորհրդատվության:
- Նշում 2՝ Վնասվածքը ստանալու պատճառը նշելիս գրեք մեկ արտահայտություն, օրինակ 'կանգնել է ականի վրա', 'POMZ ականի երկրորդային բեկորում' կամ 'շղթայասղոցով աշխատելիս կտրել է ոտքը':

Հավելված Դ
(Տեղեկատվական)
Ականազերծման միջադեպի հետաքննության ԳՄԸ օրինակ

Վերնագիր ՝ ականազերծման միջադեպի հետաքննություն	No: ՀԱԳՄՉ 10.60	Մմասթիվ՝ 01/10/04
Նպատակը ՝ Ականազերծման գործողությունների անվտանգության և որակի բարելավում՝ ականազերծման ժամանակ տեղի ունեցած միջադեպերի հանգամանքների վերաբերյալ տեղեկությունների հավաքման, վերլուծման և տարածման միջոցով:	Գործընթացից օգտվողը ՝ Գործողության ղեկավար	
	Գործընթացի պատասխանատուն ՝ Գործառնական բաժնի պետ	
Գործընթացի նկարագրությունը	Պատասխանատվություն	
	Ականազերծող կազմ	ԱԳԱՄ/ԱԳԱ Կ
Ականազերծման միջադեպ Ականազերծող կազմակերպության արտակարգ իրավիճակների արձագանքման ԳՄԸ և միջադեպի վայրի արգելափակման ԳՄԸ իրականացում: Ներկայացնել ականազերծման միջադեպի նախնական զեկույց (երկու մասից): Տես Հավելված Գ-ի Լրացում 1, որտեղ ներկայացված է նախնական զեկույցի տիպային օրինակ:		
Պարզել անհրաժեշտ հետաքննության աստիճանը. Տես սույն Հավելվածի Լրացում 1-ը՝ պաշտոնական հետաքննության համապատասխան մակարդակի ընտրության վերաբերյալ:		
Արդյո՞ք պահանջվում է հետաննության խորհուրդ (ՀԻ) կամ անկախ հետաքննություն:		
Ականազերծման միջադեպի մասին մանրամասն զեկույց: Տես Նշում 1 ստորև Ականազերծող կազմակերպությունը կազմում է ականազերծման միջադեպի մասին մանրամասն զեկույց: Տես Հավելված Գ-ի Լրացում 2-ը՝ ականազերծման միջադեպի մասին մանրամասն զեկույցի օրինակի համար:		
Իրավասությունների շրջանակի (ԻՇ) կազմում պաշտոնական հետաքննության նախաձեռնման համար Կցեք ականազերծման միջադեպի մասին մանրամասն զեկույցի օրինակը: Պաշտոնական հետաքննության ԻՇ օրինակի համար տես սույն Հավելվածի Լրացում 2-ը:		
Հետաննության խորհրդի (ՀԻ) կամ անկախ հետաքննող պաշտոնյայի (ՀՊ) նշանակում ԻՇ-ի տրամադրում ՀԻ-ին/ՀՊ-ին՝ պաշտոնական հետաքննության անցկացման համար և պատճենի տրամադրում տվյալ ականազերծող կազմակերպությանը: ՀԻ-ին/ՀՊ-ին անհրաժեշտ վարչական օգնության ցուցաբերում՝ տրանսպորտային միջոցներ, բնակարան և սնունդ:		
ՀԻ/ՀՊ կողմից հետաքննության անցկացում Համաձայն ԻՇ՝ կազմակերպությունների և միջադեպում ներգրավված աշխատողների օգնությամբ		
Արդյո՞ք պաշտոնական հետաքննությունն անցկացվել է, իսկ զեկույցը կազմվել է ժամանակին		
Միջանկյալ զեկույցի ներկայացում Տեղեկացնել ընթացքի մասին, հիմնավորել ուշացումները և նշել ավարտի ակնկալվող ժամկետը:		

<p>Վերջնական զեկույցիներկայացում Ապահովել, որ զեկույցը լինի ճշգրիտ, հասկանալի ձևակերպված, հակիրճ և ամբողջական:</p>			
<p>Վերլուծել զեկույցը և տարածել արդյունքների մասին տեղեկությունները Տեղեկություններն ուղարկել սկանազերծող կազմակերպությանը և ՄԱԿ-ի սկանազերծման ծառայությանը:</p>			
<p>Զեկույցի մուտքագրում տվյալների բազա Վերլուծել միտումները և տարածել այդ մասին տեղեկությունները: Միջադեպի մասին տեղեկությունը ներառել հաջորդ տեխնիկական աշխատանքային խմբի օրակարգում:</p>			
<p>Նշում 1. Սկանազերծման միջադեպի մասին մանրամասն զեկույց կազմելու պահանջը պետք է պարտադիր լինի սկանազերծող կազմակերպության համար՝ անկախ պահանջվող պաշտոնական հետաքննության աստիճանից: Եթե ԱԳԱՄ/ԱԳԱԿ որոշի, որ հարկավոր է միայն ներքին պաշտոնական հետաքննություն, ապա միջադեպի մանրամասն զեկույցը կարող է փոխարինել այդպիսի հետաքննությունը:</p>	<p>Նշաններ</p> <p>փաստաթուղթ (ազմակի) </p> <p>գործընթաց  նշում </p> <p>բազմակի պատասխանատվություն միայն  </p>		

**Հավելված Դ, Լրացում 1
 (Տեղեկատվական)**

Պաշտոնական հետաքննության աստիճանը որոշելու մասին ուղեցույց

	Պաշտոնական հետաքննության տեսակը		
	Հետաքննության խորհուրդ	Անկախ հետաքննություն	Ներքին հետաքննություն
1. Ականազերծման միջադեպը, որը հանգեցրել է			
ա. ականազերծման գործողություններում ներգրավված աշխատողի փոքր մարմնական վնասվածքի			
բ. ականազերծման գործողություններում ներգրավված աշխատողի լուրջ մարմնական վնասվածքի			
գ. ականազերծման գործողություններում ներգրավված աշխատողի մահվան			
դ. ականազերծման գործողություններում չներգրավված աշխատողի որևէ աստիճանի մարմնական վնասվածքի			
ե. ականազերծման գործողություններում չներգրավված աշխատողի մահվան			
2. Ականազերծման միջադեպի արդյունքում			
ա. ոչ ավել, քան 5,000.00 ԱՄՆ դոլարի վնաս է հասցվել ականազերծող կազմակերպության սարքավորումներին			
բ. 5001.00 - 50,000 ԱՄՆ դոլարի վնաս է հասցվել ականազերծող կազմակերպության սարքավորումներին			
գ. 50,000 ԱՄՆ դոլարի ավել վնաս է հասցվել ականազերծող կազմակերպության սարքավորումներին.			
դ. վնաս է հասցվել, որը կարող է համայնքի բնակչի կողմից մեծ գումարի վնասի փոխհատուցման հայցի պատճառ դառնալ			
ե. տեղի է ունեցել խոշոր միջադեպ, որը հանգեցրել է զգալի վնասի			
3. Ականազերծման միջադեպ, որի ժամանակ			
ա. նախկինում մաքրված, որպես մաքուր գրանցված կամ նշագրված տարածքում հայտնաբերվել է ական կամ ՊՊՄ,			
բ. ականազերծող կազմակերպության աշխատողները, այցելուները կամ համայնքի բնակիչները ենթարկվել են անընդունելի ռիսկի՝ հաստատված չափորոշիչների կամ ընթացակարգերի խախտման, այդ թվում սարքավորումների խախտման արդյունքում:			
գ. ականազերծման աշխատանքային տեղամասում տեղի է ունեցել ականի կամ ՊՊՄ-ի կամ պայթուցիկի չնախատեսված պայթեցում			

դ. որը կարող է դրվել զանգվածային լրատվամիջոցների ուշադրությունը կամ լուսաբանվել լրատվամիջոցների կողմից			
4. Ականների, ՊՊՄ կամ պայթուցիկների հետ չկապված միջադեպ			
ա. ակնազերծման տեղամասում, որը պահանջում է տուժածների անհապաղ տարահանում մասնագիտացված բուժհաստատություն՝ համապատասխան բուժօգնություն ցուցաբերելու համար:			

- Նշում 1՝ ՀԽ-ի կազմում պետք է լինեն հակաակնային գործողությունների ծրագրի առնվազն երեք անհրաժեշտ որակավորում և փորձ ունեցող բարձրագույն կամ տեխնիկական գծով ղեկավար պաշտոնյաներ: Հիմնական անդամները պետք է լինեն ԱԳԱՄ/ԱԳԱԿ ներկայացուցիչներ, մեկ անդամ երրորդ կողմ հանդիսացող ակնազերծող կազմակերպությունից (օրինակ ԱԳԱԿ-ից կամ ուսումնական կամ մոնիտորինգի կազմակերպությունից) և մեկ անդամ միջադեպում ներգրավված կազմակերպությունից, որը սակայն որևէ անմիջական կապ չունի միջադեպի հետ:
- Նշում 2՝ Անկախ հետաքննությունը պետք է անցկացվի ԱԳԱՄ/ԱԳԱԿ կողմից նշանակված անհրաժեշտ որակավորում և փորձ ունեցող անկախ հետաքննիչի կողմից:
- Նշում 3՝ Ներքին հետաքննությունը պետք է անցկացվի ակնազերծող կազմակերպության անհրաժեշտ որակավորում և փորձ ունեցող մասնագետի կողմից, որը սակայն որևէ անմիջական կապ չունի միջադեպի հետ:

**Հավելված Դ., Լրացում 2
(Տեղեկատվական)**

Պաշտոնական հետաքննության իրավասությունների շրջանակի օրինակ

	ԱԳԱՄ/ԱԳԱԿ անունը Հասցե Վայրը
Գրանցման համարը (միջադեպի սերիական համարը)	Ամսաթիվ
Ստացողի անունը, ազգանունը Հասցեն Վայրը	
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ	
Հղում՝	
ա. Ծրագրի անվանումը, հակաականային գործողությունների ազգային չափորոշիչները.	
բ. Ականազերծման միջադեպի մանրամասն զեկույց (պատճենը կցված է)	
1. Սույնով Դուք _____ (կազմակերպության անվանումը) նշանակվում եք ԱԳԱՄ/ԱԳԱԿ-ի _____ (անունը և պատասխանատուի պաշտոնը) կողմից՝ հետաքննելու _____ - ում (վայրը) _____ (օրը և ժամը) ականազերծման աշխատանքների իրականացման ժամանակ տեղի ունեցած միջադեպի հանգամանքները, որի հետ առնչություն ունեն _____ -ի (կազմակերպության անվանումը) աշխատակիցները (եթե դա վերաբերում է տվյալ միջադեպին):	
2. Նշյալ միջադեպը վերաբերում է (համառոտ նշել միջադեպի տեսակը, ինչպես օրինակ՝ ձեռքով ականազերծում կատարելու ժամանակ ականազերծող մասնագետը պայթեցրել է ական՝ կամ՝ նախկինում ականազերծված տարածքում հայտնաբերվել է ական):	
3. Ձեր կողմից անցկացվելիք պաշտոնական հետաքննությունը և համապատասխան զեկույցը պետք է ներառեն հետևյալ տվյալները՝	
ա. միջադեպի տեղի ունենալու պահին իրականացվող հանձնարարականների մասին տվյալներ;	
բ. երբ և որտեղ է տեղի ունեցել միջադեպը;	
գ. ինչպես է տեղի ունեցել միջադեպը, այդ թվում միջադեպին հանգեցրած իրադարձությունների, ականազերծմանը մասնակցած աշխատողների, սարքավորումների և ընթացակարգերի նկարագրությունը:	
դ. աշխատողների մարմնական վնասվածքների, սարքավորումների, գույքի և ենթակառուցվածքների վնասի պատճառը, բնույթը և ծանրության աստիճանը:	
ե. ինչու է միջադեպը տեղի ունեցել և արդյոք հնարավոր էր դրանից խուսափել:	
զ. հետազայում նմանատիպ միջադեպերից խուսափելու համար ինչ ուղղիչ միջամտություններ/միջոցառումներ են հարկավոր,	

- է. այլ հարցեր, որոնք ՀԽ կամ ՀՊ կարծիքով առնչություն ունեն միջադեպի հետ:
4. Միջադեպը հետաքննելիս հարկավոր է ուշադրություն դարձնել հետևյալ հարցերին.
- a) Միջադեպի հետ առնչություն ունեցող աշխատողների, ինչպես նաև, եթե կիրառելի է, տեսչական և ղեկավար անձնակազմի մասնագիտական վերապատրաստման և ունեցած փորձի աստիճանը: Ներառեք նաև երբ և ինչ թեմայով է եղել թիմի համար անցկացված վերջին որակավորման բարձրագույն դասընթաց, այդ թվում արդյոք միջադեպի հետ առնչություն ունեցող աշխատողները մասնակցել են այդ դասընթացին:
 - b) Միջադեպը տեղի ունենալուց առաջ և միջադեպի ժամանակ աշխատանքային ռեժիմը, այդ թվում աշխատողների աշխատանքը սկսելու և ավարտելու, ինչպես նաև հանգստի ռեժիմը: Հետաքննել արդյոք աշխատանքային ռեժիմով նախատեսված է եղել որոշակի աշխատանքների/գործառնությունների հանձնում մեկ աշխատողից մյուսին և թե ինչպիսի ընթացակարգով է դա արվել, այդ թվում արդյոք հանձնման պահին կատարվել է հրահանգավորում:
 - c) Երբ է եղել միջադեպի հետ առնչություն ունեցող աշխատողների վերջին արձակուրդը կամ երբ են վերցրել հանգստյան օր:
 - d) Երբ է եղել միջադեպի հետ առնչություն ունեցող աշխատողների թիմի վերջին մոնիտորինգը և ինչ արդյունքներ են արձանագրվել:
 - e) Միջադեպի տեղի ունենալու պահին վերջինիս հետ առնչություն ունեցող աշխատողների կողմից իրականացրած աշխատանքային ընթացակարգերը:
 - f) Ինչ անվտանգության կամ անձնական պաշտպանության սարքավորումներ կամ հանդերձանք պետք է կրեին/գործածեին միջադեպի հետ առնչություն ունեցող աշխատողները և արդյոք այդ պահանջը կատարվել էր: Եթե այո, ապա արդյոք դրանք գործածվել/կրվել են ճիշտ ձևով: Հարկ է հաշվի առնել նաև արդյոք անվտանգության կամ անձնական պաշտպանության սարքավորումները կամ հանդերձանքը նպաստում են կամ կարող էին նպաստել մարմնական վնասվածքների նվազեցմանը:
 - g) Արդյոք միջադեպի հետ առնչություն ունեցող աշխատողներին ցուցաբերվել է շտապ բուժօգնությունը և արտարակ իրավիճակների արձագանքման տեխնիկական օժանդակություն և արդյոք այն ճիշտ է ցուցաբերվել՝ նկատի ունենալով տվյալ միջադեպի հանգամանքները: Եթե ցուցաբերված բուժօգնությունը բավարար/ճիշտ չի եղել, հաշվի առնել միջադեպից տուժածի վրա այդպիսի բուժօգնության հնարավոր ազդեցությունը/հետևանքները:
 - h) Արդյոք միջադեպը տեղի է ունեցել հետևյալի պատճառով կամ միջադեպին նպաստել են հետևյալ հանգամանքները՝
 - (1) կառավարման և հսկողական համակարգի թերությունները,
 - (2) ներգրավված անձնակազմի անուշադրությունը, անփութությունը կամ սխալ վարքագիծը,
 - (3) տեսչական կամ ղեկավար անձնակազմի կողմից աշխատողներին տրվել են սխալ կամ կյանքի համար վտանգավոր հրամաններ,
 - (4) հրամանների, հրահանգների կամ ընթացակարգերի չկատարում,

- (5) ակոնոլի, թմրանյութերի կամ բժշկի կողմից նշանակած դեղերի օգտագործում,
- (6) Չափորոշիչների կամ ԳՍԸ թերություններ,
- (7) Սարքավորումների սխալ շահագործում,
- (8) Ներգրավված աշխատողների ուսուցման մեջ թերություններ,
- (9) Միջադեպի հետ առնչություն ունեցած աշխատողի հիվանդություն կամ մարմնական վնասվածք,
- (10) Սարքավորումների կամ նյութերի, այդ թվում պայթուցիկների խափանում,
- (11) Գերակայող եղանակային պայմաններ,
- (12) Անձնակազմին տեղամասում ցուցաբերվող հիմնական օժանդակության մեջ առկա թերություններ, ինչպես օրինակ առողջության առաջնային պահպանման ծառայությունների, գիշերակացի, սննդի կամ ջրի ապահովում:

5. զեկույցի մեջ պետք է ամփոփվեն հետաքննության արդյունքները, եզրակացություններ արվեն այն գործոնների մասին, որոնք նպաստել են միջադեպին և կատարվեն անհրաժեշտ առաջարկություններ՝ հետազայում նմանատիպ միջադեպերը կանխելու նպատակով:

6. Ջեկույցի հետ պետք է ներկայացվեն նաև հետևյալ փաստաթղթերը:

ա. Պաշտոնական հետաքննություն անցկացնելու նպատակով աշխատակիցների նշանակման մասին փաստաթղթի պատճենը (սույն փաստաթուղթը);

բ. Միջադեպում ներգրավված կազմակերպության կողմից ներկայացված ականագերծման միջադեպի մասին մանրամասն զեկույցի պատճենը;

գ. Վկաների ցուցմունքները;

դ. Մխեմաներ, գծապատկերներ, տեղանքի և աշխատանքային տեղամասի հատակագծեր;

ե. Միջադեպի կարևոր մասերի մասին վկայող լուսանկարներ, ինչպես օրինակ տեղանքի պայմանները; միջադեպին առնչվող ականները, ՊՊՄ կամ պայթուցիկները; պայթուցից գոյացած փոսերը և բեկորները, մարմնական վնասվածք ստացած աշխատողները, սարքավորումների, գույքի կամ ենթակառուցվածքների վնասները:

զ. Հանձնարարականի մասին փաստաթղթեր, որը կարող է ներառել հետազոտման, մասին զեկույցներ, տարածքի մաքրման պլաններ, ականագերծման տարածքի հատակագիծ կամ աշխատանքային տեղամասի վերաբերյալ փաստաթղթեր;

է. Քաղվածք չափորոշիչներից և ԳՍԸ-ից, ըստ անհրաժեշտության;

ը. Բժշկական քարտեր և դատափորձագիտական զեկույցները

թ. Այլ գրավոր ապացույցներ, որոնք ձեռք են բերվել հետաքննության ընթացքում:

7. Հետաքննության մասին զեկույցը պետք է ներկայացվի _____ (օրը, ժամը): Եթե կազմված զեկույցը հնարավոր չէ ներկայացնել սահմանված ժամկետներում, ապա հարկավոր է այդ օրը ներկայացնել հետաքննության ընթացքի մասին միջանկյալ զեկույց և վերջնական զեկույցի ուշացման պատճառները, իսկ հետագա միջանկյալ զեկույցները պետք է ներկայացվեն յուրաքանչյուր () օրը մեկ՝ մինչև հետաքննության վերջնական զեկույցի ներկայացումը:

Նշանակող մարմնի ստորագրությունը
Նշանակող մարմնի անվանումը

Փոփոխությունների գրանցում

ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կառավարում

ՀԱՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական հանգամանքներից:

Այս ՀԱՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցումը, մինչև նոր վերանայում իրականացվի:

ՀԱՄՉ-ի ամենավերջին փոփոխությունները այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱՄՉ-ի կայքէջում՝ www.mineactionstandards.org:

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ
1	1.12.2004թ	<p>1. Փոփոխությունների ձևաչափի որոշում</p> <p>2. Տեքստի փոքր խմբագրական փոփոխություններ</p> <p>3. Տերմինների, սահմանումների և հապավումների փոփոխություններ՝ ըստ անհրաժեշտության, ապահովելու համար, որ այս ՀԱԳՄՉ համահունչ է ՀԱԳՄՉ 04.10-ին:</p> <p>4. Էական փոփոխություններ՝</p> <p>ա. կետ 4.1.1. տեքստում մեծ փոփոխություններ են արվել և ավելացվել է նոր ենթակետ «գ»</p> <p>բ. կետ 4.1.2. ամբողջությամբ փոխվել է և ավելացվել են երկու նոր ենթակետեր՝ 4.1.2.1. և 4.1.2.2.</p> <p>գ. կետ 4.1.3. նոր կետ է ավելացվել</p> <p>դ. կետ 4.2.1. տեքստում մեծ փոփոխություններ են արվել</p> <p>ե. կետ 4.2.2. տեքստում մեծ փոփոխություններ են արվել</p> <p>զ. կետ 5.1. տեքստային փոփոխություններ ենթկետ «բ»ում.</p> <p>է. Հավելված Գ. տեքստում մեծ փոփոխություններ են արվել</p> <p>ը. Հավելված Դ. տեքստում մեծ փոփոխություններ են արվել</p>
2	23.07.2005թ	<p>1. Ներածության առաջին պարբերությունում նոր նախադասություն է ավելացվել՝ հետաքննությանն պատակի վերաբերյալ</p> <p>2. Կետ 4.1.2.2. Երրորդ նախադասությունից հանվել է «կազմվել» բառը և փոխարինվել «լրացվել» բառով: Ավելացվել է նոր՝ 4-րդ նախադասություն ականագերծմանը չվերաբեռող միջադեպի մասին զեկուցելու վերաբերյալ:</p> <p>3. Կետ 4.2.1. երկրորդ պարբերություն, ենթակետ «թ») նոր բացման արտահայտության ավելացում. Նախկին ենթակետ «զ») փոխվել է, դարձել ծանոթագրություն, որոշակի փոփոխված ձևակերպմամբ:</p> <p>4. Կետ 4.2.2. 5-րդ պարբերության ենթակետ «բ») ավելացվել է արտահայտություն միջադեպի հետ չկապված հետաքննություն անցկացնող աշխատողների մասին: Առաջին ծանոթագրության երկրորդ նախադասությունում փոփոխություն է կատարվել՝ կապված ՀԽ-ի անդամների հետ:</p> <p>5. Կետ 5.1. ենթակետ «գ»), փոխվել է ձևակերպումը</p> <p>6. Հավելված Գ-ի Լրացում 2, Նշում 8, փոփոխություն է կատարվել ԱԳՏԿԶ զեկույցների օգտագործման վերաբերյալ:</p>
3	1.08.2006թ	<p>1. Փոքր փոփոխություններ/լրացումներ են արվել նախաբանի առաջին և երկրորդ պարբերություններում</p> <p>2. Ավելացվել են «Ականներ և ՊՊՄ» տերմինը և «ԼՊԶ» տերմինը:</p>